

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
տնտեսագիտության դոկտոր



Դ.Վ. Հարությունյան
01 դեկտեմբերի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անի Ժորայի Սարգսյանի «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Դավիթ Հարությունյան՝ տնտեսագիտության դոկտոր, Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտության թեկնածու, Եվգենյա Հակոբյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Աշոտ Մարկոսյան՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆ., Բելլա Գաբրիելյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Տաթևիկ Փարսադանյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ստեփան Պապիկյան՝ տեխնիկ.գիտ.թեկնածու:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարական արժեքների վրա հիմնված ժամանակակից պետությունը, հանդես գալով հասարակության շահերի և հետաքրքրությունների դիրքից, նպատակ է հետապնդում տնտեսական աճի միջոցով ապահովել համընդհանուր բարեկեցություն: Ըստ էության, վերջինս պետք է լինի յուրաքանչյուր պետության գլխավոր նպատակը և քաղաքականության հիմնական թիրախը: Հարկային համակարգը հանդիսանում է

տնտեսության պետական կարգավորման կարևոր գործիք: Իսկ շուկայական հարաբերությունների պայմաններում վերջինիս դերն էականորեն մեծանում է: Հայաստանի Հանրապետությունում իրականացված հարկային քաղաքականությունը, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, առավելապես ունեցել է ֆիսկալ ուղղվածություն: Եթե որոշակի սոցիալ-տնտեսական իրավիճակներում, հիմնականում պայմանավորված պետության ծախսային կարիքների ծավալով, նման քաղաքականությունն ինչ-որ առումով արդարացված է եղել, ապա նույնը չենք կարող ասել երկարաժամկետ հատվածի համար: Այս առումով մեծ կարևորություն է ձեռք բերում տնտեսության հարկային կարգավորումը, որը խթանի ազդեցություն կարող է ունենալ ինչպես տնտեսական միջավայրի բարելավման, այնպես էլ հարկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման վրա: Սակայն Հայաստանի Հանրապետությունում հարկային կարգավորման գործիքակազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն բավականաչափ թույլ է, հստակեցված չեն հետապնդվող խնդիրները, դրանցից շատերը տնտեսագիտական հիմնավորվածության տեսանկյունից խոցելի են, իսկ ստացված արդյունքները՝ խնդրահարույց: Բնականաբար, դա իր համապատասխան անդրադարձն է ունենում ինչպես ընդհանուր հարկային համակարգի, այնպես էլ տնտեսության վրա: Տնտեսության զարգացման ներկա փուլում, ելնելով ՀՀ տնտեսության երկարաժամկետ զարգացման հրամայականից, մեծ կարևորություն է ձեռք բերում տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կատարելագործումն ու դրանց կիրառման արդյունավետության բարձրացումը: Սույն ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն հետազոտության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կատարելագործմանն

ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումը, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել տնտեսության պետական կարգավորման էությունը և գնահատել հարկային համակարգի դերը այդ գործընթացում,
- Ուսումնասիրել հարկային քաղաքականության սկզբունքներն ու մեթոդները, գնահատել դրանց տեղը հարկային հարաբերությունների համակարգում,
- Վերլուծել հարկային համակարգի բնականոն գործունեության ապահովման և հարկային քաղաքականության իրականացման վրա ազդող գործոնները,
- Վերլուծել Հայաստանի Հանրապետությունում հարկային կարգավորման օրենսդրահիրավական և կազմակերպական հիմքերը, ուսումնասիրել այդ ուղղությամբ առկա միջազգային փորձը և գնահատել դրա տեղայնացման հնարավորությունները հանրապետությունում,
- Բացահայտել տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները և դրանց արդյունավետության վրա ազդող գործոնները ՀՀ-ում,
- Մշակել հարկային համակարգի զարգացման և հարկային կարգավորման բարելավման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության ընթացքում իրականացված վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և կիրառական բովանդակության գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ հանդիսացողները հետևյալներն են.

- Հարկաբյուջետային ցուցանիշների և իրականացված քաղաքականության վերլուծության հիման վրա բացահայտվել են հանրապետությունում հարկային եկամուտների հավաքագրման հիմնախնդիրները և մշակվել են հարկային քաղաքականության կատարելագործման և դրա կանխատեսելիության բարձրացմանն ուղղված մոտեցումները:

- հանրապետությունում հարկային կարգավորման գործիքակազմի համակողմանի վերլուծության արդյունքում գնահատվել է առանձին հարկատեսակների գծով կարգավորիչ գործառույթի գործնական իրացման մակարդակը և դրա հետևանքները տնտեսական գործընթացների կարգավորման վրա և առաջարկվել են մոտեցումներ տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես, հարկման բազաների և կիրառվող դրույքաչափերի տնտեսագիտական հիմնավորվածության բարձրացման վերաբերյալ,
- հարկային կարգավորման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև դրա տնտեսական և սոցիալական նպատակների արդյունավետ համադրման նպատակով մշակվել են ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի հարկման կատարելագործման ուղիներ,
- հարկային արտոնությունների ուղղությունների, դրանց հիմնավորվածության, շահառուների և հասցեականության քննարկման շրջանակներում մշակվել են մոտեցումներ հարկային արտոնությունների՝ որպես հարկային կարգավորման գործիքի կատարելագործման ուղղությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորույթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների էությունը և տնտեսական բովանդակությունը» գլխում քննարկվել են տնտեսության պետական կարգավորման նպատակներն ու խնդիրները,

հարկային համակարգի դերն այդ գործընթացում և հարկային արտոնությունների նշանակությունը հարկային կարգավորման գործում:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման առանձնահատկությունները ՀՀ-ում» գլխում վերլուծության են ենթարկվել ՀՀ-ում հարկային քաղաքականության հիմնական ուղղությունները, տնտեսության հարկային կարգավորման գործիքակազմը և հարկային կարգավորման հիմնախնդիրներն ու դրանց ազդեցությունը տնտեսության վրա:

Ատենախոսության երրորդ՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների զարգացման ուղղությունները» գլխում առաջարկվել են Հայաստանի Հանրապետությունում տնտեսության պետական կարգավորմանն ուղղված հարկային քաղաքականության մշակման ու իրականացման ուղղություններ, հարկային կարգավորման տնտեսական և սոցիալական նպատակների համադրման ուղիներ և հարկային վարչարարության զարգացման մոտեցումներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսությունը հարուստ է վերլուծություններով, սակայն աշխատանքի գիտագործնական նշանակությունն ավելի կբարձրանար, եթե մասնավորապես 2-րդ գլխի առաջին ենթագլխում տեղ գտած վերլուծություններում ներկայացված լինեին նաև փոփոխությունների վրա ազդեցություն ունեցած գործոնները:
2. Աղյուսակ 3-ում հեղինակը ներկայացրել է ՀՀ Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2010-2021 թթ., սակայն չի նշել, թե դրանք ինչ արժեքներով են ներկայացված (իրական կամ անվանական):

3. Աշխատանքի 2-րդ գլխի առաջին ենթագլխում ներկայացված են եվրամիության և եվրասիական անդամ երկրների հարկեր/ՀՆԱ հարաբերակցության մակարդակը՝ առանց նման ըստություն կատարելու լրացուցիչ հիմնավորման:
4. Հարկային եկամուտների աճի տեմպերը ներկայացնելիս հեղինակը ներկայացրել է անվանական արժեքների հիման վրա հաշվարկված աճի տեմպը: Մինչդեռ աճի տեմպի հաշվարկի մեջ անհրաժեշտ է հաշվի առնել իրական արժեքներ: Նաև պարզաբանման կարիք ունի հարկերի աճի համաչափությանը վերաբերող պնդումը (էջ 40): Միևնույն ժամանակ հեղինակի կողմից չի պարզաբանվել, թե որոնք են 2013-2016 թթ. հարկային եկամուտների բավականին ցածր աճի տեմպերի պատճառները (էջ 40):
5. Աշխատանքի 2-րդ գլխի երրորդ ենթագլխում ներկայացված աղյուսակներ 9-ում և 10-ում բերված են 2021 և 2022՝ ոչ ավարտուն տարվա տվյալներ, որոնց հիման վրա էլ կատարվել են եզրահանգումներ ու առաջարկություններ: Կարծում ենք նշված ժամանակահատվածի տվյալները համադրելի չեն, քանի որ 2022 թվականը դեռ չի ավարտվել, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածը շատ կարճ է հստակ ու հիմնավոր գնահատականներ տալու համար:
6. Հեղինակը առաջարկում է, որ, եթե անշարժ գույքը զբաղեցված չէ (բնակեցված չէ), դրա նկատմամբ կիրառել գույքահարկի բարձր դրույքաչափ, որի համար չի տալիս համապատասխան հիմնավորում: Այս պարագայում էական տնտեսական էֆեկտ կարծում ենք չի կարող ապահովվել, քանի որ ցանկացած դեպքում սեփականատերը գույքահարկից չի ազատվում: Այլ բան է, եթե առաջարկվեր այդ մոտեցումը կիրառել գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: Մյուս կողմից բավականին բարդ է պարզել՝ իրականում չբնակեցված բնակարանների քանակը: Ավելին վերջին օրենսդրական փոփոխությունների հետևանքով բավականին բարձրացվել է գույքահարկը, որը կշարունակվի ևս մի քանի տարի (էջ 96):
7. Հեղինակը աշխատանքում առաջարկում է ներդնել եկամուտների հայտարարագրման համակարգ, և դրա շրջանակում կիրառել “սոցիալական կրեդիտների” համակարգը: Սակայն այդ առաջարկությունը կրում է մակերեսային բնույթ: Ավելին, վերոնշյալի մասին մանրակրկիտ կերպով բազմիցս ներկայացվել է այլ հեղինակների աշխատություններում:
8. Աշխատանքում հեղինակը ներկայացնում է հարկային ծախսերի չափը 2020-2021 թթ.-ին՝ նշելով դրանց բավականին մեծ լինելը և անարդյունավետությունը: Սակայն բացակայում են որևիցե հաշվարկներ, որոնք կհիմնավորեն հեղինակի պնդումները:

9. Աշխատանքում հեղինակը համապարփակ կերպով ներկայացրել է ոլորտում առկա բացթողումներն ու խնդիրները: Այնուամենայնիվ, 3-րդ գլուխն առավել շատ ունի նկարագրական բնույթ, այնինչ կատարված առաջարկությունների կշիռն ու գիտագործնական նշանակությունն էլ ավելի կբարձրանար, եթե դրանք ունենային համապատասխան հիմնավորումներ ու ցույց տրվեին դրանց կիրառման ազդեցությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անի Ժորայի Սարգսյանի «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը ներկայանում է որպես ամբողջական, ավարտուն և օգտակար հետազոտություն, որում վեր են հանվել Հայաստանի Հանրապետությունում տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները: Աշխատանքում տեղ գտած թերությունները էապես չեն ազդում աշխատանքի գիտական արժեքի վրա:

Հեղինակի գիտագործնական ընդհանրացումները, եզրակացություններն ու առաջարկները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր միջավայրի կողմից՝ հանրապետությունում տնտեսության զարգացման, գործարար միջավայրի բարելավման և հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիրի մշակման և դրա հետևողական իրականացման ընթացքում:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 6 գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Այսպիսով՝ Անի Ժորայի Սարգսյանի «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 6 հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (01.12.2022թ., արձանագրություն թիվ 33):

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու**

Գ.Հարությունյան

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու**

Տ.Շահինյան

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու
Գ.Հարությունյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու
Տ.Շահինյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում են»՝*

**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու,
«01» դեկտեմբերի, 2022թ.
Կ. Տ.**



Ե.Ա.Հակոբյան